ինչ զարմանք որ մեր եկեղեցին դեռ այնքան հաւատքով կը շարունակէ իր դարաւոր օրհնութիւնն և աղօթքը «Օրհնեսցի և պահպանեսցի... Արեւմտեան կողմն աշխարհիս, և թագաւորութիւն քրիստոնէից»։

Եւ ահա յիշեալ կրկին տեսակէտով Արեւմուտքի մէջ կը գտնենք «Դաւիթ բէկ»ի երկու դիւցազները. Ստեփան Շահումեան՝ Վենետիկ, և Աւետիք քահանայ՝ Հռոմ։

Շահումեաններ արդէն կային Վենետիկ, ինչպէս յայտնի է շատ մը պատմական տեղեկութիւններէ։ 1750ի Օգոստ. 1ին հրատարակուած վենետկեան վաւերագիր մը[1] մարդահամարով կու տայ թիւը Հայ աշխարհիկ և եկեղեցական անձերու. անոնց կարգին՝ չորս Շահումեաններու անուններ[2] (Saum) որոնց առաջինը՝ գաղութի աւագանիին դասէն է — Ստեփանոսը (Stefano Saum)։ Իսկ թէ այդ հայ դիւցազնը երբ Վենետիկ եկած է՝ կը գտնենք մեր ընթերցողներուն ծանօթ Հ. Յովհաննէս Թովմաճանի ինքնակենսագրութեան մէջ։

Այս Հ. Յովհաննէս, դեռ պատանի, 1733 Յունիս 12ին Զմիւռնիայէն մեկնելով կ'ուղեւորի Իտալիա՝ Մխիթար Աբբահօր աշակերտելու համար. Օգոս. 5–ին կը հասնի Լիվոռնոյ՝ ուրիշներու հետ. հոն կը մնայ քառանթինա արգելարանով՝ 62 օր. իր գալուստն իմացուցած ըլլալով մեր երանաշնորհ Հիմնադրին՝ Սա հայրական հոգածու սրտով իր Օգոստոս 22 թուակրով կը պատասխանէ իրեն գրելով՝ թէ Բարեկամի մը կը յանձնէ զինքը՝ որ շուտ ընկերի մը հետ Վենետիկ ղրկէ զինքը։ Երկրորդ նամակով մը[3] — զոր ստորեւ կը դնենք ամբողջապէս իբրեւ նշխար մը մեր երանաշնորհ Հիմնադրին օծուն գրչին և իբրեւ նմոյշ դարու աշխարհաբարին — Մխիթար Աբբահայր անունը կու տայ յիշեալ բարեկամին՝ Զաքար։ Հ. Յովհաննէս

---

1. Nota di quanti Armeni e figli d'Armeni adulti che si ritrovano in questa inclita Città di Venezia, tanto secolari, quanto religiosi, in questo dì primo Agosto 1750.

2. Հ. Ալիշան «Սիսական»ին մէջ կու տայ Շահումեանց ազգաբանութիւնը՝ քաղած Վենետկոյ Հայոց Ս. Խաչ եկեղեցւոյ և պետական դիւաններէն, հաստատելով թէ 1650էն ալ առաջ Ստեփան զօրավարի հօրեղբայրը Ոսկան որդի Սահակի՝ Արեւելքէն եկած է և Վենետիկ հաստատուած։

Ինչպէս կը տեսնենք Մխիթար Աբբահօր նամակէ մը, Շահումեան ընտանիքը մտերիմ կերպով բարեկամացած էր Մխիթարեան Ուխտին հետ։ Այդ բարեկամութեան ապացոյցն է և իրենց կրօնասէր բարեպաշտութեան՝ որ 1736ին վանքիս եկեղեցւոյն մէջ գեղեցիկ խորան մը կը շինեն նուիրուած Ս. Լուսաւորչի, երեք յարգի պատկերներով՝ որոնք գործն են Fr. Zugno հեղինակին, և 1737ին ալ նոյն խորանին առջեւ պատրաստեր էին իրենց համար գերեզման մը, կափարիչին վրայ դնելով հետեւեալ տապանագիրը.

ՂԱՓԱՆՑԻ ՇԱՀՈՒՄԵԱՆՑ ՏՈՒՆ
ՊԱՐՈՆ ԶԱՔԱՐՆ ՈՐ Է ԴԱՒԹԵԱՆ
ՊԱՐՈՆ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆԷՍԵԱՆ
ՊԱՐՈՆ ՆԱՀԱՊԵՏՆ ՊՕՂՈՍԵԱՆ
ԵՏՈՒՆ ՇԻՆԵԼ ԶԱՅՍ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ
ԵՒ ԸՆԴ ՆՄԻՆ ԶԱՅՍ ԴԱՄԲԱՐԱՆ
Ի ՅԻՇԱՏԱԿ ԵՒ Ի ԿԱՑԱՆ
ԲՆԱԿԻՑ ՈՐՔ ԵՆ ԾԻՆԴՔ ՆՈՑՆՈՑ ՏԱՆ։

Ստեփան զօրավարի հայրն է Վարդանէս և պապը՝ Սահակ. ինք ամուսնացած է Վենետիկ՝ Մարիամ Վառվառէ Ռոզալպայի հետ հաւանօրէն 1746–7ին, և ունեցեր է երեք զաւակ՝ որոնց երկուքը Յովհան և Մարթա վաղամեռիկ. 1757էն անդին սնանկացած կամ փակուած է Շահումեանց վաճառատունը՝ որ դամասկեան կերպաս, հայելիներ և ապակեղէն ջահեր կը ծախէր. Ստեփան Շահումեան մեռած է նախ քան 1782 թուականը, չի գիտցուիր սակայն Վենետի՞կ թէ անկէ դուրս։

3. Ի ձեռն Ստամպոլցի Յարութիւն պատանւոյն
հասցէ ի քաղաքն ի Նաւազարկէ
յԱլիկոռնա

Բազմաւ օրհնութեամբ ծանիր՝ Յարութիւն, զի ես զգիրն քո առի. և իմացայ որ դու հետ Միքէլին գալ չես ուզեր. այլ կուզես մինակ լինիլ. Նորա համար ահա ես զքեզ իմ գրովս յանձնեցի պարոն Զաքարիային, որ քեզ տիրութիւն անէ. և ամենայն կերպիւ լաւ հոգ տանի քո վերայ և զքեզ լաւ հաւատարիմ փուրքաչով՝ ղրկէ աստ ի Վենետիկ. Եւ յուսամ թէ զքեզ յիւր տունն տանի և պահէ չորս հինգ օր մինչեւ փուրքաչն Ֆիօրէնցայու եղանելոյ լինի. և ապա զքեզ կալէսով կու յղէ ի Ֆիօրէնցա, և այնտեղացն փուրքաչին կու յանձնեն զքեզ և նա կու բերէ։ Դու ջանացիր լաւ խելօք և զգաստ կենալ թէ՛ այդ տեղդ, թէ՛ ի ճանապարհին. և Աստուած օգնական լիցի քեզ։ Եւ ծանիր զի այդ պարոն Զաքարիան մեզ մեծ բարեկամ է. և դու այնպէս գիտացիր որ քեզ հօր պէս տիրութիւն կանէ, և զամենայն բանդ կու հոգայ։ Բաւ է։

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ ՀԱՅՐ

1733, Սեպտ. 19